


# ԼԳԲՏ ԱՆՁԱՆՔ ԻՐԱՎՈՒՆՔԵՐԻ ԻՐԱՎԻԽԱՎԸ

Տարեկան գեկույց  
Յայսատան 2015



Տարեկան գեկույց. ԼԳԲՏ անձանց իրավունքների իրավիճակը Հայաստանում, 2015թ.

Կազմվել է Հայաստանում (մայիս, 2016թ.)

Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ-ի կողմից՝  
Զիգորիդ Ռառզինգ Թրասթի ֆինանսական աջակցությամբ

# Ներածություն

2015թ. ԼԳԲՏ անձանց իրավունքների համար անկման տարի էր, քանի որ նոր ընդունված Սահմանադրությամբ ամուսնությունը սահմանվեց միություն՝ բացառապես կոչ և տղամարդու միջև։ Նույնասեռականների ամուսնության հարցը հատկապես լայնորեն արժարժվեց Սահմանադրության նախագծի քննարկումների ժամանակ, երբ հոմոֆոբ միավորումներն իշխանություններին մեղադրում էին նոր Սահմանադրությամբ նույնասեռականների ամուսնությունները թույլատրելու մեջ, ինչի արդյունքում ամուսնության իրավունքի վերաբերյալ հոդվածը վերախմբավորվեց այնպես, որպեսզի նույնասեռականների համար հնարավոր չլինի ամուսնանալ:

ԼԳԲՏ անձանց ու նրանց աջակիցների դեմ ատելության մեկ այլ ալիք բարձրացավ, երբ Հայաստանում առաջին անգամ անցկացվեց «Ծիածան» փորումը ու հրապարակվեցին մասնակիցների մի մասի նկարը։ ԼԳԲՏ համայնքի նկատմամբ տելությունն այնքան ավելացավ, որ ԱՄՆ դեսպանատունը, Հայաստանում ՄԱԿ-ի գրասենյակը և «Ֆրոնթլայն դիֆենդերս» իրավապաշտպան կազմակերպությունը իրենց մտահոգությունը հայտնեցին հայտարարություններով։

2015թ. պետության ու հասարակության վերաբերնունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ ոչնչով չէր տարբերվում նախորդից։ Նրանց նկատմամբ վիրավորական, գրպարտիչ տեղեկությունների տարածումը, խորականությունը, բռնություններն ու բռնության կոչերը, ԶԼՍ-ներով ու համացանցով ատելության խոսքի տարածումը շարունակական բնույթ են կրել։

2015թ. նշանավորվեց նաև ԼԳԲՏ համայնքի դեմ ակտիվ պայքարող քաղաքական գործի «առութինգով», որը Հայաստանում առաջին դեպքն էր, երբ բացահայտվեց հասարակությանը հայտնի հոմոֆոբ գործի նույնասեռական լինելը։

2015թ. ևս ԼԳԲՏ անձինք ապավիճել են հասարակական կազմակերպությունների օգնությանը՝ խուսափելով իրենց բողոքները ներկայացնել պետական մարմիններին։ 2015թ. ընթացքում ԼԳԲՏ մարդկանց իրավունքների խախտման առնչությանը ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանության գրասենյակ է դիմել ընդհանունը 2 հոգի։

Սույն գեկույցն ամփոփում է «Հանրային տեղեկատվության և գիտելիքի կարիք» ՀԿ-ի (Փինք Արմենիա) 2015թ. արձանագրած և փաստաթղթավորված դեպքերը, ԼԳԲՏ անձանց հետ անցկացված հարցազրույցների արձանագրությունները, դատական գործերի, համացանցում և ԶԼՍ-ներում տեղ գտած հրապարակումները։

2015թ. իրավունքների ոտնահարման հարցով Փինք Արմենիա է դիմել 46 մարդ։ Ստացված իրավունքների խախտումների դեպքերն այս կամ այն կերպ կապված են դիմումների իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գեներային ինքնության կամ դրա ասոցացման հետ։ Զեկույցում ցույց է տրվում, թե ԼԳԲՏ անձանց հետ փոխհարաբերություններում ինչ խախտումներ է կատարել պետությունը, իրավունքների ոտնահարման ինչ բնույթի դեպքեր են արձանագրվել 3-րդ անձանց հետ փոխհարաբերություններում ու թե բոլորի համար հավասար հնարավորություններ և ապահով միջավայրի ստեղծելու պետության ձախողումը ինչ իրադրության է հանգեցրել։

ԼԳԲՏ անձանց իրավունքների ոտնահարումը գեկույցում ներկայացված է հետևյալ կառուցվածքով։

1. Մարդու իրավունքների պաշտպանությանը վերաբերող ազգային և միջազգային օրենսդրության այն հիմնական դրույթները, որոնք խախտվել կամ սահմանափակվել են արձանագրված դեպքերում։
2. Կոմկրետ իրավունքների արձանագրված ոտնահարումների դեպքերի ընդհանուր նկարագրությունը։

Զեկույցի վերջում զետեղված են «Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք» ՀԿ-ի առաջարկությունները պետական մարմիններին, ԶԼՄ-ներին, միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին, որոնց իրականացումը հնարավորություն կտա ապահով միջավայր ստեղծել հասարակության մեջ ԼԳԲՏ անձանց համար, որտեղ նրանք հանդես կգան որպես հասարակության լիիրավ անդամներ և հնարավորություն կունենան արդյունավետ իրացնելու իրենց իրավունքները և ազատությունները:

# 1. LԳԲՏ անձանց մարդու իրավունքները հարգելու և պաշտպանելու պետության պարտավորությունը

## 1.1. Կյանքի իրավունք

1. Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:
2. Ոչ ոք չի կարող կամայականորեն գրկվել կյանքից:
3. Ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի:

Յոդված 24, ՀՀ Սահմանադրություն<sup>1</sup>

Անձի կյանքի իրավունքի իրականացումն ապահովելու պետության պարտականությունը ոչ միայն ենթադրում է ուղղակիորեն չմիջամտել դրա իրականացմանը, այլև պաշտպանել մասնավոր անձանց կողմից ոտնձգություններից<sup>2</sup>: Այսինքն, պետության ուղղակի պատասխանատվության բացակայությունը անձի կյանքի իրավունքի միջամտության գործում չի բացառում վերջինիս պատասխանատվությունն իրավունքի խախտնան հարցում<sup>3</sup>: Այնուամենայնիվ, կյանքի իրավունքը պետք է մեկնաբանվի այնպես, որպեսզի անհամաշափ ծանր բեռ չդրվի իշխանությունների վրա: Երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում կյանքի իրավունք խախտում կարող է արձանագրվել այն դեպքում, եթե հաստատվի, որ պետությունը իմացել է կամ պարտավոր է իմանալ տվյալ պահին երրորդ անձանց կողմից անձի կյանքին սպառնացող իրական և անմիջական վտանգի առկայության մասին և իր լիազորությունների շրջանակներում չի ձեռնարկել անհրաժեշտ ողջամիտ միջոցներ կանխելու անձի կյանքին սպառնացող այդ վտանգը<sup>4</sup>:

## Կյանքին և առողջությանը վնաս հասցնելու և այլ սպառնալիքներ

### «Ծիածան» ԼԳԲՏ Ֆորում

Յոկտեմբերի 17-18-ը տեղի է ունեցել Յայատանում առաջին ԼԳԲՏ ֆորումը<sup>5</sup>: Փինք Արմենիայի կայքեջում ֆորումի անկացման մասին տեղեկության և մասնակիցների լուսանկարը իրապարակելուց հետո մի շարք լրատվամիջոցներ վերահրապարակեցին լուրը: Սոցիալական կայքերում լրատվամիջոցների տարածած իրապարակումների տակ բազմաթիվ օգտատերեր սպառնալիքներ էին հնչեցրել ֆորումի մասնակիցներին, ընդհուպ մինչև՝ սպառնության:



Նկարում երևացող անձանցից մեկը պատմում է, որ իր ծանոթ տղաներից մեկը ֆեյսբուքում անձնական նամակով սպառնացել է վերջինիս, իր տեղն ասել ուրիշներին, որ գնան վերացնեն. «Գրել էր՝ մի աղջկա ուղղեցի հիվանդանոց ընկավ, նայի տես քեզ էլ չուլղենք», - պատմում է ֆորումի մասնակիցը:

Ֆորումի մեկ այլ մասնակցի ֆեյսբուքի անժամոթ օգտատերը անձնական նամակ է գրել

<sup>1</sup> Յոդված 24, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.

<sup>2</sup> Անգելովան և Իլիեվն ընդդեմ Բուլղարիայի Թիկ 55523/00 Միե՞ն վճիռ, §93

<sup>3</sup> Եվրոպայի Խորհրդի CM/Rec(2010)5 «Սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության իհմքով խտրականության դեմ պայքարի միջոցների վերաբերյալ» հանձնարարական

<sup>4</sup> Օսմանն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիկ 23452/94 Միե՞ն վճիռ

<sup>5</sup> Յայստանում տեղի ունեցավ առաջին ԼԳԲՏ ֆորումը,  
<http://www.pinkarmenia.org/2015/10/lgbt-forum/>

ու սպառնացել վերացնել նրան ու նրա ընտանիքը՝ գրելով. «Դեսա սպասի հասցետ իմանամ գամ հետևիցդ, ավելի շուտ ընտանիքիդ հետևից, նախնական տվյալներով արեցի Վարդան, շուտով կոնկրետ կիմանամ սաղ»:



«**մեծ լեռ**»-ի ներկայացուցիչ էլլա Ղամբարյանը պատասխանել է, որ տեղյակ չեն եղել, թե ինչ համաժողով է լինելու<sup>6</sup>: Յարցին, թե արդյո՞ք հետազոյւմ ևս տարածք կտարամադրեն, Ղամբարյանն ասել է. «Կարծում եմ՝ ոչ: Մեր մտքով բացարձակ չանցավ, որ կարող է խնդիր առաջանալ»:

Յապարակման հեղինակ Սոնա Դավթյանը Հ.Գ.-ում հանգստյան տներին հորդորել է, որ ՀԿ-ներին կամ մարդկանց տարածք տրամադրելուց առաջ ուշադիր լինեն, որպեսզի հետազոյւմ ստիպված չլինեն «մեծ գումարներ ծախսել սենյակները դեղինֆեկցիայի ենթարկելու համար»:

Ֆորումի վերաբերյալ մեկնաբանություններից աննաևն չեն մնացել նաև պետական պաշտոնյանները: Իրավունք թերթի «Վանաձորի քաղաքապետն ամորթանք է տալիս համասեռամոլության քարոզիչներին» նույն հոդվածում իր մեկնաբանություններն է տվել նաև Վանաձորի քաղաքապետ Սամվել Ղարբինյանը՝ ասելով. «Անոթ իրենց: Այդ հանգստյան տունն ին համայնքին չի պատկանում: Բայց իրոք ամոր իրենց, որ ննան հավաք են կազմակերպել: Եթե լոռեցիներն իմանային, որ ննան հավաք է կազմակերպվում, նրանք ննան հավաք չեն կարող անել»: Յարցին, թե ինչ քայլեր կծեռնարկեն, որպեսզի կանխեն այդօրինակ հետազա հավաքները Լոռու մարզում, Ղարբինյանն ասել է. «Դուք մեզ տեղյակ պահեք, մնացածը մենք գիտենք»:

Վանաձորի քաղաքապետի արտահայտությունների առնչությամբ «ՓԻՆՔ»-ը հարցում էր ուղարկել Սամվել Ղարբինյանին՝ ճշտելու հարցազրույցի համապատասխանությունն իրականությանը, ինչին վերջինս պատասխանել էր. «... հոկտեմբերի 22-ին Իրավունք թերթի կայքեջում հրապարակված հոդվածում ներկայացված իմ կողմից արտահայտված «Դուք տեղյակ պահեք, մնացածը մենք գիտենք» խոսքերը հիմա էլ եմ շատ կարևորում, քանի որ իրապես մենք գիտենք, որ ներկայիս գլոբալիզացնան պայմաններում շատ կարևոր է մատող սերնդի հայեցի դաստիարակությունը և հայ ընտանիքի ավանդական արժեքների պահպանումը»:

Ղարբինյանի արտահայտությունների առիթով «ՓԻՆՔ»-ը դիմել էր ՀՀ Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի՝ «Դանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված էթիկայի կանոնները խախտելու առնչությամբ վարույթ հարուցելու ակնկալիքով: Դանձնաժողով իրաժարվել է վարույթ հարուցել՝ պատճառաբանելով, որ ներկայացված հարցը դուրս է Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովի իրավասության շրջանակից:

<sup>6</sup> Վանաձորի քաղաքապետը ամորթանք է տալիս համասեռամոլության քարոզիչներին,  
<http://goo.gl/v8LNvC>

Կերը նշված երկու դեպքերի հիման վրա Փինք Արմենիան, որպես ֆորումի կազմակերպիչ, դիմել էր իրավապահ մարմիններին, որպեսզի քրեական գործ հարուցվի և սպառնալիք հնչեցնողները պատասխանատվության կանչվեն, սակայն քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ:

Իրավունք թերթը, պարզելով, որ ֆորումը տեղի է ունեցել Լոռու մարզի Վանաձոր քաղաք տանող ճանապարհին գտնվող «մեծ լեռ» հանգստյան տանը, պատասխան էր պահանջել, թե ինչու են տարածք տրամադրել միջոցառման համար:

## **Մի դրոշի նկարի պատմություն**

Մայիսի 17-ին՝ հոմոֆոբիայի և տրամսֆորմիայի դեմ պայքարի միջազգային օրը LԳԲՏ հարցերի շատագով մի խումբ մարդիկ Երևանի կենտրոնական փողոցներից մեկում լուսանկարվել էն ծիածանագույն դրոշով: Նկարը սոցիալական կայքերում, ապա առցանց լրատվամիջոցներում հայտնվելուց հետո, բազմաթիվ մարդիկ սպանության կոչեր ու հայիշյանքներ էն հնչեցրել լուսանկարում երևացող մարդկանց հասցեին: Սպառնալիքների առնչությամբ ՓԻՄ-ը դիմել է իրավապահ մարմիններին: Քննչական կոմիտեում քրեական գործի հարուցումը մերժվել է՝ հանցակազմի բացակայության հիմքով:



## **Սպառնալիքներ**

Փինք Արմենիայում դեպք էր գրանցվել, երբ անձը տեղեկացրել էր, որ իր մորաքրոջ տղան, որն իմացել է իր նույնասեռական լինելու մասին, վերջինիս ծեծի է ենթարկել փողոցում, ինչի ժամանակ նաև վիրավորանքներ ու հայիշյանքներ է հասցրել նրան՝ կապված սեռական կողմնորոշման հետ: Այդ միջադեպից հետո մի քանի անգամ մորաքրոջ տղան դեռևս շարունակում է սպառնալ, որ ծեծի կենթարկի իրեն նորից, եթե շարունակի այդ կյանքով ապրել: Նաև շանտաժի է ենթարկում վերջինիս, որ նրա սեռական կողմնորոշման մասին կիայտնի ծնողներին և բարեկամներին:

21 տարեկան նույնասեռական տղան Փինք Արմենիա էր դիմել ընտանիքում ունեցած կոնֆլիկտի պատճառով, որը կապված էր իր սեռական կողմնորոշման հետ: Յորեղբայրը պատահական տեսնել է նրա հեռախոսին եկած կարծ հաղորդագրությունը, որն ուղարկել էր տղայի գուգողները: Յաղորդագրությունը պարունակում էր սիրային խստումներ և այլ ինտիմ բնույթի արտահայտություններ, որոնց միջոցով հորեղբայրը հասկանում է, որ հաղորդագրություն գրողը տղա է և որ իր եղբոր տղան նույնասեռական է: Տղայի հորեղբայրը սկսում է վիճել նրա հետ, անպատվել, ֆիզիկական բռնություն է կիրառում նրա նկատմամբ: Արդյունքում հորեղբայրը դուրս է հանում նրան տնից՝ թույլ չտալով իր հետ վերցնել որևէ իր:

Փինք Արմենիայում գրանցված այլ դեպքի համաձայն, նույնասեռական տղային համալսարանից դուրս գալուց հետապնդել են, կանգնել են շենքի մուտքի մոտ, որտեղ վերջինս մտել է, այնուհետև շարունակել են հետևել և հրավիրել են հաշվեհարդար տեսնելու՝ այն պատճառաբանելով այն հանգամանքով, որ նա շատ կանացի արտաքին ունի և դա նրան հարիր չէ: Ընկերների միջամտությամբ վեճը կանխվել է:

## 1.2 Խոշտանգումներից կամ անմարդկային, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից զերծ մնալու իրավունք

1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:
2. Մարմնական պատիճմերն արգելվում են:
3. Ազատությունից գրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք:

Դոդված 26, մաս 1, ՀՀ Սահմանադրություն<sup>7</sup>

Խոշտանգումը ցանկացած գործողություն է, որի միջոցով պետական պաշտոնյա անձը կամ պաշտոնապես հանդես եկող այլ մարդ, կամ նրանց հրահրմանք և գիտությամբ կամ լռելայն հանաձայնությամբ, որևէ անձի մտածված կերպով հասցնում է ուժեղ ցավ կամ տառապանք՝ մարմնական կամ մտավոր, նրանց կամ երրորդ անձից տեղեկություններ կամ խոստովանություն կորցելու, իր կամ երրորդ անձի կատարած հանցանքի կամ այն գործած լինելու մեջ կասկածելու համար, ինչպես նաև նրան կամ երրորդ անձին վախեցնելու կամ հարկադրելու նպատակով, կամ ցանկացած բնույթի խորականության վրա հիմնված ամեն մի այլ պատճառով։ Այս բնորոշման մեջ չեն մտնում այն ցավն ու տառապանքը, որոնք ծագում են սոսկ օրինական սանկցիաների պատճառով, անբաժանելի են այդ սանկցիաներից կամ ծագել են դրանցից՝ պատահականորեն<sup>8</sup>։

Խոշտանգումներից և դաժան վերաբերմունքից ազատ լինելը անձի բացարձակ իրավունք է և ենթակա չէ սահմանափակման<sup>9</sup>։ Որպեսզի դաժան վերաբերմունքն առաջացնի անձի վերոհիշյալ իրավունքի խախտում, անհրաժեշտ է, որպեսզի այն հասնի դաժանության նվազագույն մակարդակի, պետք է հաշվի առնվեն նաև կոնկրետ գործի հանգանանքները, ինչպես, օրինակ, վերաբերմունքի բնույթը, թե ինչ համատեքստում է այն տեղի ունեցել, դրա տևողությունը, ֆիզիկական և հոգեբանական հետևանքները, իսկ որոշ դեպքերում նաև՝ անձի տարիքը, սեռը և առողջական վիճակը<sup>10</sup>։ Անհրաժեշտ է տարբերակել խոշտանգումը անմարդկային վերաբերմունքից, արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից, որտեղ խոշտանգումը անձին դիտավորությամբ պատճառված այն վճասն է, որը պատճառել է շատ լուրջ և դաժան տառապանք, մինչդեռ նվաստացնող վերաբերմունք կարող է համարվել այն վերաբերմունքը, որ անձի մոտ առաջացնում է վախի, վտանգի, ստորացված լինելու զգացողություններ<sup>11</sup>, իջեցնում է անձի հեղինակությունը և դերը, մարդկային արժանապատվությունը կամ ստիպում է անձին գործել իր կամքին կամ խղճին հակառակ<sup>12</sup>։ Որոշ դեպքերում սեռական կողմնորոշնան կամ գեներային ինքնության հիմքով խորականությունը, սպանալիքները, նույնպես նվաստացնող վերաբերմունք է համարվում<sup>13</sup>։ Այս դեպքերում անհրաժեշտ չէ պետության կողմից դիտավորության առկայությունը անձի անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքից ազատ լինելու իրավունքի խախտման փաստը ճանաչելու համար<sup>14</sup>։

<sup>7</sup> Դոդված 26, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.

<sup>8</sup> Դոդված 1, Խոշտանգումների են դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձեւերի դեմ ՍԱԿ-ի 1984թ.կոնվենցիա

<sup>9</sup> Փրեթին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄիԵԴ Թիվ 2346/02 վճիռ, §49

<sup>10</sup> Փրայսն ընդդեմ Միացյալ Թագավորության ՄիԵԴ Թիվ 33394/96 վճիռ, Կոստելլո-Ռոբերտսն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ 13134/87 ՄիԵԴ վճիռ, §30

<sup>11</sup> Այդին ընդդեմ Թուրքիայի Թիվ 23178/94 ՄիԵԴ վճիռ

<sup>12</sup> Արևելյան աֆրիկյան ասիացիներն ընդդեմ Միացյալ Թագավորության Թիվ ՄիԵԴ 4715/70, 4783/71 և 4827/71 գործերով

<sup>13</sup> Սմիթը և Գրեդին ընդդեմ Միացյալ Թագավորության ՄիԵԴ Թիվ 33985/96 և 33986/96 գործեր

<sup>14</sup> Փիրսն ընդդեմ Յունաստանի Թիվ 28524/95 ՄիԵԴ վճիռ, ինչպես նաև Խոշտանգումների և դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի այլ ձևերի հարցերով ՍԱԿ-ի Հատուկ գեկուցողի U.N. Doc. No. A/56/156 2001թ. գեկույց փաստաթուղթ

## ԼԳԲՏ անձանց իրավիճակը քրեակատարողական հիմնարկներում

ՀՅ քրեակատարողական հիմնարկներում ԼԳԲՏ անձանց վիճակը շարունակում է ծանր մնալ: Վերջիններս պահման պայմանները քրեակատարողական հիմնարկներում ակնհայտորեն տարբերվում են այլ կալանավորների կամ դատապարտյալների պահման պայմաններից: ԼԳԲՏ անձինք պահվում են առանձին խցերում, չեն օգտվում ընդհանուր օգտագործման սպասքից, և կատարում են հիմնարկների ամենակեղտու և «ոչ հարիր» համարվող աշխատանքներ՝ զուգարանների և տարածքի այլ մաքրության աշխատանքներ:

Դարձ է նշել, որ անձի նկատմամբ վատ վերաբերմունքը պայմանավորված է ոչ միայն նրա իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշմամբ, այլև որպես «արվամոլ» պիտակավորմամբ՝ քրեակատարողական հիմնարկներում գործող քրեական ենթամշակույթի որոշակի չափանիշներին բավարարելու կամ չբավարարելու պայմաններում:

Որպես օրինակ՝ «Հրազդան» ՔԿՀ-ում պատիժը կրող 18-ամյա կալանավոր նույնասեռական Արթուր Միքայելյանը զանգահարել է tert.am լրատվական ու պատմել, որ ցանկանում է տեղափոխվել «Նուբարաշեն» ՔԿՀ կամ որոշ ժամանակով՝ դատապարտյալների հիվանդանոց, քանի որ այնտեղ ճնշումների է ենթարկվում<sup>15</sup>:

Թերթի հետ զրույցում նա նշել է, որ 10 հատ դիմում է ուղարկել քրեակատարողական վարչության պետ Արթուր Օսիկյանին և տեղաբաշխման հանձնաժողովի նախագահին, բայց պատասխան չի ստացելում:

«Ստեղի պետը նուրբ ձևով ասեմ, ինձ ասում ա՝ այ գոմիկ, այ եսիմ ինչ, այ անչափահաս: Շանտաժ ա անում թե դատի կտա, բայց ինչի՞ համար (...) Այստեղ արդեն թշնամի են ձեռք բերել: «Հրազդան» ՔԿՀ-ի պետը երեկ գիշեր ինձ շանտաժ էր ամում, ասում էր՝ քեզ ծեծի կենթարկեմ, աթոռը գլխիդ կջարդեմ, ինձ դրդում ա ինքնասպանության, ասում ա ուզում ես կախվի, քեզ չենք օգնելու», - ասել է դատապարտյալը ու նշել, որ արդեն մի անգամ ինքնավնասվել է և պատրաստվում է կրկին ամել:

Medialab.am-ում «Սեռական շահագործում» և «կեղտոտ աշխատանք» նույնասեռական դատապարտյալները «դժոխքում» են ապրում» հոդվածում նախկին կալանավորը, որը 7 տարիների ընթացքում 4 կալանավայր է տեսել՝ Արթիկի, Սևանի, Կոշի և Նուբարաշենի, պատմել է, որ բոլոր տեղերում էլ, եթե նույնասեռական ես, ամենադաժան ու ստորացուցիչ վերաբերմունքին ես արժանանում, ընդիուա մինչև սեռական ուսնձգությունների<sup>16</sup>: «Չոնի հայաքում 12 տեղանոց զուգարան կա, ըստեղ ամեն օր սերս էին անում, նույնասեռականներին զորով մտցնում էին զուգարան ու ...», - պատմել է նա՝ նշելով, որ նույնասեռականների դեմ ուսնձգությունների մեջ իրենց մեղքի բաժինն ունեն կալանավայրի աշխատակիցները, - «Չոնի «լավ տղերքը» կալանավայրի աշխատողին 1000-2000 դրամ են տալիս, որ նույնասեռականներից մեկին բերեն իրենց խուց, եթե չի էլ ուզում, զորով են տանում, եթ տղուն ոնց ասես օգտագործում են, հետո նույն աշխատողը հետ ա տանում իրենց խուց: Աշխատողներն են դաբրո տալիս կալանավորներին, ասում են՝ ոնց ուզում եք, ըստենց էլ շարժվեք»:

Այդուհանդերձ նրա նկատմամբ բռնությունների մասին կալանավայրում գտնվելու ժամանակ նա չի ցանկացել բողոքել. «Ինձ 4-5 հոգով ծեծել են, որովհետև ես չեմ համաձայնել սերս ամել մեկի հետ, ում չեմ ուզում: Իմ տեսքից պարզ երևում էր, որ ես ծեծված եմ, բայց ես չեմ բողոքել, ոչ էլ ինձ աշխատակիցներն են հարցրել, թե ինչ է եղել հետդ», - պատմել է նա:

Նրա պնդմամբ, իրեն սպանության և գողության շինժու մեղադրանք է ներկայացվել, քանի որ տեղյակ են եղել նրա կողմնորոշման մասին:

<sup>15</sup> Սիասեռական կալանավոր պահանջում է «Հրազդան» ՔԿՀ-ից իրեն տեղափոխեն «Նուբարաշեն», սակայն ՔԿՀ-ում ճնշումների է ենթարկվում, <http://www.tert.am/am/news/2015/12/16/nubarashen/1876424>

<sup>16</sup> «Սեռական շահագործում» և «կեղտոտ աշխատանք» նույնասեռական դատապարտյալները «դժոխքում» են ապրում, <http://medialab.am/news/id/6632>

## ԼԳԲՏ անձանց իրավիճակը գինված ուժերում

ԼԳԲՏ գորակոչիկների համար ոչ նպաստավոր պայմաններ ի հայտ են գալիս դեռևս զինվորական հաշվառման, բժշկական քննության և հետազոտման ընթացքում, ինչպես նաև դրա հետևանքով առաջացած խնդիրների արդյունքում:

Անձինք, ում սեռական կողմնորոշումը կամ գենդերային ինքնությունը հայտնի է դարձել ծառայության ընթացքում, նույնպես շարունակում են խոցելի մնալ ՀՀ զինված ուժերում գտնվելու ընթացքում:

Փինք Արմենիայի գրանցած դեպքի համաձայն, 1 տարի գինծառայության մեջ գտնվող անձը պատմել է, որ ծառայակիցներից մեկն իմացել է իր սեռական կողմնորոշման մասին, այնուհետև լուրը հայտնի է դարձել ողջ գորամասին: Դրամանատարությունը նրան հայտնել է, որ վերջինս պետք է դիմում ներկայացնի գորամասը փոխելու, ինչպես նաև հոգեբուժական հաստատություն ուղղորդելու նպատակով: Դրամից հետո նրան մի քանի օր պահել են հոգեբուժական հաստատությունում, որտեղ, համոզվելով, որ նա չի խաբում իր սեռական կողմնորոշման վերաբերյալ, տեղափոխել են զինվորական հոսպիտալ՝ զինվորական ծառայությունը շարունակելու համար: Նրա պնդմամբ Վարդենիսի հոսպիտալում ծառայում են միայն մի քանի նույնասեռականներ, որոնք կատարում են հոսպիտալի մաքրության աշխատանքները, բնակվում են խիստ վատ պայմաններում՝ հոսպիտալից առանձնացված մի տնակում, որտեղ չկա ջեռուցում և առաջնային կենցաղային պայմաններ: Նույնասեռական գինվորները առանձնացված են ընդհանուր հոսպիտալի անձնակազմից, նրանց չի թույլատրվում օգտվել շփվել հոսպիտալի ծառայողների հետ, օգտվել ընդհանուր ճաշարանից և ընդհանուր օգտագործման սպասքից և կենցաղային այլ իրերից: Բացի դա, հոսպիտալի ողջ անձնակազմը գիտի իր և մի քանի մյուս ծառայողների սեռական կողմնորոշման մասին, տարածքում կան նաև բնակելի շինություններ, որտեղ ապրող մարդիկ նույնպես գիտեն, թե ինչու են մի քանի զինվորներն առանձնացվել ընդհանուր գորամասից:

Մեկ այլ դեպքի համաձայն, անձը, որը ծառայում է ՀՀ զինված ուժերում, շարունակաբար շանտաժի է ենթարկվում իր նախկին ծառայակից զինվորներից մեկի կողմից, ով ասում է, որ կտեղեկացնի իր սեռական կողմնորոշման վերաբերյալ տեղեկություններ, եթե հրաժարվի որոշակի գործողություններ իր օգտին կատարելուց, մասնավորապես, եթե հրաժարվի իրեն վճարել որոշակի գումար: Անձը, գտնվելով տագնապալից իրավիճակում, ստիպված է եղել միառժամանակ կատարել իրենից պահանջված գործողությունները՝ գտնելով, որ կարող է առավել վատ վիճակում հայտնվել, եթե զորամասում տեղեկանան իր սեռական կողմնորոշման մասին:

## Տրանսգենդերների նկատմամբ բռնություն

Օգոստոսի 26-ի լույս 27-ի գիշերը Երևանի կենտրոնում 5 հոգի հարձակվել ու ծեծել են 2 տրանսգենդեր անձի: Մինչ ծեծը տուժողները վագել են ՀՀ գլխավոր դատախազության մուտքի մոտ՝ հույս ունենալով, որ դատախազության ծառայողները օգնություն կցուցաբերեն: Սակայն, ինչպես նշում են 2 տուժողները, դատախազությունից չեն արձագանքել, դուռը չեն բացել, փոխարենը դատախազության ծառայողները ներսից լուր հետևել են, թե իրենց ինչպես են ծեծում<sup>17</sup>:

Փաստի վերաբերյալ դիմողներից մեկը հաղորդում է տվել ՀՀ Երևան քաղաքի Կենտրոնի Ոստիկանության քննչական բաժնումները: Զարուցվել էր քրեական գործ, սակայն հետո տուժողը բողոքը հետ էր վերցրել, այս մասին ավելի մանրամասն տես 1.6 բաժնում:

<sup>17</sup> Ծեծել են միասնական լինելու համար, <https://youtu.be/lNL5tzhDmGU>

### 1.3. Խորականության և ատելություն սերմանող խոսքից զերծ մնալու իրավունք

Ատելություն և անհանդուրժողականություն պարունակող խոսքի արգելքը ենթադրում է ոչ միայն պետության կողմից նման խոսքի տարածման արգելքը, այլև պարտականություն ձեռնարկելու համապատասխան միջոցներ, որպեսզի նման խոսքը երրորդ անձանց կողմից չխորախուսվի<sup>18</sup>: Այս առիթով պետության պարտականությունն է ձեռնարկել օրենսդրական և այլ միջոցառումներ կանխելու անձանց նկատմամբ անհանդուրժողականության և ատելության որոշակի հարթակներում, որոշակի ձևերով և բովանդակությամբ սերմանումը:

Ատելության խոսքը սահմանափակում է խոսքի ազատությունը: Խոսքի ազատությունը բացարձակ իրավունք չէ և ենթակա է որոշակի սահմանափակումների<sup>19</sup>: Այն ներառուն է գաղափարներ և կարծիքներ արտահայտելու ազատությունը, բայց միևնույն ժամանակ պարտականությունն է սահմանում խուսափել անձի նկատմամբ այնպիսի արտահայտություններից, որոնք պարունակում են վիրավորանք այլ անձանց նկատմամբ, խախտում են նրանց իրավունքները<sup>20</sup>: Մասնավորապես, խոսքի ազատության իրավունքը չի ենթադրում ատելության խոսքի ազատությունը<sup>21</sup>:

Ատելության խոսք է համարվում «...արտահայտման այն բոլոր դրսևորումները, որոնք տարածում, հրահրում, խթանում կամ արդարացնում են ռասայական ատելությունը, քսենօֆրիան, հակասեմիտիզմը կամ անհանդուրժողականությամբ պայմանավորված ատելության այլ դրսևորումներ, ներառյալ, ագրեսիվ ազգայնականությամբ պայմանավորված անհանդուրժողականությունը, փոքրամասնությունների և այլ խմբերի նկատմամբ խորականությունն ու թշնամանքը...»<sup>22</sup>:

#### LԳԲՏ անձանց նկատմամբ պետական պաշտոնյաների բացասական վերաբերմունքը

2015թ. պետական այրերի ելույթների LԳԲՏ անձանց դեմ ելույթները նախորդ տարվա համեմատ չեն նվազել: Սակայն ի տարբերություն 2014թ., այս տարում LԳԲՏ անձանց դեմ կոչերին միացան նաև այլ կուսակցությունների առաջնորդներ և անդամներ, մասնավորապես Աժ-ում «Բարգավաճ Հայաստան» խմբացկության ղեկավար, Եվրոպական ինտեգրման հանձնաժողովի նախագահ Նաիրա Զոհրաբյանը, LGBTnews. առ-ին տված հարցազրույցում ասել էր, որ LԳԲՏ անձնանց նկատմամբ իր վերաբերմունքը բացասական է և ինքն անեն ինչ կանի, որպեսզի LԳԲՏ անձինք չկարողանան իրենց մետաստագները տարածել<sup>23</sup>.

«Ինչպես իմ շատ գործընկերներ, ես չեմ առաջարկում նրանց, ասենք, խարույկի վրա այրել կամ «իզգոյացնել» հասարակությունից, բայց ես ուղղակիորեն ընդունեմ եմ, որ որքան մեր հանրությունը զերծ մնան նման այլասերվածությունից, այնքան մենք կկարողանանք մեր ազգի բարոյակերնիկ նկարագիրը պահպանել: Ինձ համար բացարձակապես ընդունելի չէ այդ ամենը», - ասել Զոհրաբյան՝ իր այսպիսի դիրքորոշումը կապելով Աստծո հետ, - «Ես գիտեմ, որ կա բնության օրենք, Աստծո օրենք, պատվիրաններ, և այն խավը, որը կզնա Աստծո պատվիրաններին դեմ, կարժանանա Աստծո պատժին: Այո՛, նրանց մեջ երևի մի

<sup>18</sup> Օգգուր Գյունդեմն ընդդեմ Թուրքիայի Թիվ 23144/93 ՄԻԵԴ ՎՃԽ

<sup>19</sup> ՄԻԿ Ընդհանուր մեկնարանություն Թիվ 34

<sup>20</sup> Երբական ընդդեմ Թուրքիայի Թիվ 59405/00 ՄԻԵԴ ՎՃԽ

<sup>21</sup> ՄԻԿ Ընդհանուր մեկնարանություն Թիվ 11

<sup>22</sup> Եվրոպայի նորհրդի Նախարարների Կոմիտեի, հանձնարարական Թիվ R 97 ,ատելության խոսքին վերաբերյալ, ընդունված 30 հոկտեմբեր, 1997թ.

<sup>23</sup> Ես կանեմ հնարավոր ամեն ինչ, որ LԳԲՏ անձինք չկարողանան իրենց մետաստագները տարածել Հայաստանում. Նաիրա Զոհրաբյան, <http://goo.gl/xwRS0I>

խավ կա, որ գենետիկական հիվանդ է, մեկ այլ խավ՝ հոգեկան շեղմուներ ունի, բայց պետք չէ տուրք տալ»:

Նաիրա Զոհրաբյանը, որը նաև ԵԽԽՎ Հայաստանի պատվիրակության անդամ է, ընդգծել է, որ վեհաժողովում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն առնչվող բոլոր օրինագծերին դեմ է քվեարկել և շարունակելու է դեմ քվեարկել:

Ժառանգություն կուսակցության նախկին անդամ Ռուբիկ Հակոբյանը, որը նաև Աժ-ում ժառանգություն խմբակցության ղեկավարն էր, այժմ անկուսակցական պատգամավոր է, կուսակցությունից դուրս գալուց ամսներ անց իրավունք թերթին տված հարցազրույցում անդրադարձել էր Հայաստանում տեղի ունեցած ԼԳԲՏ ֆորումին՝ հեգնելով, որ մասնակիցները եվրոժամաներով միասեռականներ էին, ասել է. «Մենք երբեմն գրկում ենք մեզ ինքնապաշտպանական հնարավորությունից՝ չգիտեն ինչ-ինչ արժեքներ պահպանելով<sup>24</sup>: Այն բոլոր իրավունքները, որոնք հակասում են ազգի, պետության, անվտանգության իրավունքին, դրանք մեզ համար գոյություն չպետք է ունենան: Ինձ այսօր պաշտպանող զինվոր է պետք, ոչ թե միջազգային կառույցներից օգտվող և ինչ-որ աղանդների մաս կազմող մեկը, ով ասում է՝ չեմ ուզում ծառայել»:

Հակոբյանը ԼԳԲՏ անձանց դեմ պայքարը ևս հիմնավորել է կորոնվ. «Ես կրոնական առումով մոլեռանդ չեմ, բայց Աստվածաշունչն ասում է գնացեք բազմացեք, տարբեր սեռեր, պահպանեք բնությունը: Յիմա ինչ, Աստվածաշունչն օրենքից դուրս հայտարարե՞նք»:

Օրինաց երկիր խմբակցության պատգամավոր Յովհաննես Մարգարյանն առաջարկել է արհամարհել ԼԳԲՏ մարդկանց և նրանց իրավունքները, LGBTnews.am-ի տված հարցազրույցում նա ասել է, որ իր համար անընդունելի են նույնաւորական անձինք, թեև եթե իրավունքի խախտման հետ կապված դիմեն իրեն, նա կփորձի օգնել: Յարցին, թե ինչպես կքվեարկի, եթե Աժ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ օրինագիծ լինի, Մարգարյանն ասել է, որ ընդհանրապես չի մասնակցի քվեարկությանը<sup>25</sup>:

Հայաստանի հանրապետական խմբակցության պատգամավորները, ինչպես և նախորդ տարի, 2015թ. ևս արտահայտեցին իրենց բացասական վերաբերմունքը ԼԳԲՏ անձանց նկատմամբ:

LGBTnews.am-ին տված հարցազրույցում ՀՀԿ-ական պատգամավոր, Մարդու իրավունքների պաշտպանության և հանրային հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ռուզաննա Մուրադյանը հայտնել էր, որ ԼԳԲՏ անձանց իրավունքն ինքը մարդու իրավունք չի համարում և խորհուրդ է տվել պրոպագանդայով չգրադարձել<sup>26</sup>. «Այս ի՞նչ թեմա եք, ախոր, վերցրել, ո՞նց կարելի է, եկեք չպրոպագանդենք: Եթե խոսում ենք այս ամենի մասին, դա արդեն պրոպագանդա է», - ասել է նա:

ՀՀԿ-ական մեկ այլ պատգամավոր՝ Մուրադ Մուրադյանը, ամաչում է խոսել ԼԳԲՏ անձանց ու նրանց իրավունքների մասին, այդ մասին նա ասել է LGBTnews.am-ի հետ գրույցում<sup>27</sup>. «Անոք ա, ամոք ա, ինձ էղախի հարցեր մի՛ տվեք, ես տենց բաներին դեմ են, գնացե՛ք, ուրիշ պատգամավորներին հարցրեք: Գնա գրի, ասա՝ Մուրադ Մուրադյանը դեմ ա: Անոք ա, հայ ժողովրդին ամոք ա, ինձնից հեռու»:

Մուրադյանը նաև նշել է, որ ԼԳԲՏ մարդիկ «ուղեղի շեղում ունեն» ու նրանք վերջին 30-40 տարվա մեջ են ի հայտ եկել:

<sup>24</sup> Յիմա ինչ, Աստվածաշունչն օրենքից դո՞ւրս հայտարարենք, <http://goo.gl/f064Zy>

<sup>25</sup> Յովհաննես Մարգարյանն առաջարկում է արհամարհել ԼԳԲՏ անձանց և նրանց իրավունքները, <http://goo.gl/lhlcjb>

<sup>26</sup> ԼԳԲՏ անձանց իրավունքը ես մարդու իրավունք չեմ համարում. ՀՀԿ-ական Ռուզաննա Մուրադյան, <http://goo.gl/JByGZK>

<sup>27</sup> ՀՀԿ-ական պատգամավոր Մուրադ Մուրադյանը կարծում է, թե ԼԳԲՏ մարդիկ «ի հայտ են եկել վերջին 30-40 տարվա մեջ», <http://goo.gl/LtJwmg>

Տաճատ Վարդապետյանին, որը նույնպես ՀՀԿ-ական պատգամավոր է, հունից հանել է ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ LGBTnews.am հարցը<sup>28</sup>. «Ինձ այդպիսի հարցեր մի՛ տվեք, դրանք ինձ համար ամենաատելի մարդիկ են: Ես իինա գուցե սեռական բնույթի հայիոյանք տամ այդ մարդկանց», - ասել է նա՝ ավելացնելով, որ իր համար մոլորակի վրա ԼԳԲՏ անձանցից զգվելի մարդ չկա:

### **Ատելության արշավ՝ ուղղված «Նորսերունդ» մարդասիրական հասարակական կազմակերպության և Գերմանիայի դեսպանատան դեմ**

Հետզ.ամ առցանց թերթում «Գերմանիայի դեսպանատունը 30.000 եվրո է տվել «Նորսերունդ» ՀԿ-ին՝ սեռական փոքրամասնության շահերի պաշտպանության համար»<sup>29</sup>, այն է՝ ապաստան տրամադրել այն ԼԳԲՏ անձանց, որոնց իրենց սեռական կողմնորոշման պատճառով դուրս են հանել տնից, իրապարակված հողվածից հետո համացանցում ԼԳԲՏ համայնքի դեմ կրկին հարձակման ալիք բարձրացավ: Հայաստանի դեմոկրատական կուսակցության ղեկավար Արամ Սարգսյանն ու Համահայկական ծնողական կոմիտե ՀԿ-ի ղեկավար Արման Բոշյանը համատեղ մամուլի ասուլիս տվեցին՝ քննադատելով Գերմանիայի դեսպանատանը: Սարգսյանն ասուլիսի ժամանակ իր զարմանքն է արտահայտել, որ Գերմանիայի դեսպանատունը ավանդական ընտանիքներին աջակցելու փոխարեն, ԼԳԲՏ համայնքն է աջակցում. «Մենք հազիվ ազատեցինք ու նաքրեցինք Կոմայգին սեռական փոքրամասնություններից (այս այգում էին կանգնում տրանսվեստիտ մանրմնավաճառները): Ի վերջո, ոչ ոք այդ փոքրամասնություններին չի խանգարում իրենց գործը կատարել, բայց նրանք անընդհատ ավելին են ուզում», - ասել է նա և մտահոգություն հայտնել, որ կարող է խորականության դեմ օրենք ընդունվել, - «Սա հստակ ծրագիր է. ցանկանում են հայաթափել Հայաստանը»:

Արման Բոշյանն առաջարկել է օրենք սահմանել, որպեսզի վերահսկվի դրսից եկող գումարները. «Հայաստանում ոչ միայն թույլատրվում է, այլ որևէ օրենք չկա, որ արգելի դեսպանատանը գումար տրամադրել միասեռականների համար, ավելին՝ նույն բանը կարող է անել Ադրբեյջանը կամ Թուրքիան: Այսինքն՝ որևէ օրենք չկա, որը վերահսկի դրսից եկող գումարները, որոնք իրականում մեր ազգային անվտանգության դեմ են», - ասել Բոշյանը:



### **ԼԳԲՏ դրոշի այրում**

Նոյամբերի 6-ին «Հայաստանի սոցիալիստական շարժման» ղեկավար Ռոբերտ Ահարոնյանի և «Հանուն օրենքի» ՀԿ-ի գլխավորությամբ մի խումբ երիտասարդներ հավաքվել էին Հայաստանում Եվրոպական գրասենյակի դիմաց՝ վառելու ԼԳԲՏ դրոշն ու պահանջելու, որպեսզի ԵՄ-ը պաշտպանի մեծամասնության իրավունքն ու նույնասեռականների իրավունքների քարոզ չանի<sup>30</sup>: Ակցիայի շարժառիթը ՍԱԿ-ի և Հայաստանում ԱՄՍ դեսպանի հայտարարություններն էին, որոնք դատապարտել էին

<sup>28</sup> Պատգամավոր Տաճատ Վարդապետյանին հունից հանեց ԼԳԲՏ անձանց իրավունքների մասին հարցը, <http://goo.gl/ixpvKb>

<sup>29</sup> Գերմանիայի դեսպանատունը 30.000 եվրո է տվել, Նորսերունդ ՀԿ-ին՝ սեռական փոքրամասնության շահերի պաշտպանության համար, <http://goo.gl/SpuirF>

<sup>30</sup> Վառեցին ԼԳԲՏ դրոշը, <http://news.am/arm/news/294826.html>



ԼԳԲՏ ֆորումից հետո ասելության դրսնորումները<sup>31</sup>: Թեև ԵՄ-ը որևէ արձագանք չէր տվել տեղի ունեցածին, սակայն ցուցարարները այդ վայրն էին ընտրել: Մամուլի իրապարակումների համաձայն, ակցիայի մասնակիցները հիմնականում 17 տարեկանից ցածր պատանիներ էին:

Լրատվամիջոցներին տված հարցազրույցում Ահարոնյանը ԼԳԲՏ դրոշը համեմատել էր սատանայի հետ՝ հիմնավորելով, որ ծիածանը 7 գույն ունի, իսկ ԼԳԲՏ դրոշը 6: Նա ԵՄ-ից խնդրում էր պաշտպանել իրենց գենդերային հավասարությունից. «Մեր իրավունքները ուժնահարպում են, քանի որ ես իմ երեխայի հետ փողոցով անցնելուց չեմ պատկերացնում ինչ ասել, ովքեր են սրանք կանանց շորերով հագնված, կոչիկներով: Ոչ մի խնդիր չունենք իրենց անձնականի հետ, չենք մտնում, չենք խփում, չենք ծեծում, խոսքը գնում է, որ ամբողջությամբ պրոպագանդան դադարեցնեն Հայաստանում: Ասել, որ երեխան 18 տարեկանում կորոշի՝ ինքը եգ է, թե որձ, կին, թե տղամարդ, դա պարադոք է, անորմալություն է: 7 թիվը դա աստծու թիվ է, իսկ ծիածանն ունի 7 գույն, դամեռ իրենց դրոշի մեջ 6 գույն է՝ սատանի թիվ է»:

Օրեր անց Ռոբերտ Ահարոնյանին առιթինգ արեցին (իր կամքից անկախ բացահայտեցին նրա նույնասեռական լինելը): LGBTnews.am-ը իրապարակել էր «Բացահայտենք հոնքոր գեյերին» նախաձեռնության հաղորդագրությունը, որի հեղինակաները նշել էին, որ Ռոբերտ Ահարոնյանն ակտիվորեն պայքարելով ԼԳԲՏ համայնքի և նրանց իրավունքների դեմ, իրականում համայնքի ներկայացուցիչ է: Նրանք նաև տեսանյութ էին իրապարակել, որտեղ Ռոբերտ Ահարոնյանը նույնասեռական թեմաներով ինտիմ գրույց էր վարում չափով, ընթացքում վեր էր կենում և մերկ հետույքը ցույց տալիս տեսախցիկի առջև :

Սուրբինգից հետո Ռոբերտ Ահարոնյանը ԼԳԲՏ համայնքի նկատամամբ ավելի ագրեսիվ դարձավ՝ մամուլում պնդելով, որ այդ տեսանյութում երևացող մարդն ինքը է: Համացանցում հայիոյում ու սպառնում էր վերացնել մարդկանց, որոնք տարածել են տեսնյութը, ինչպես նաև այցելում էր այդ մարդկանց տներ: Նրա այցերը դադարեցին այն ժամանակ, երբ Ֆեյսբուքի օգտատերերից մեկը դիմեց ոստիկանություն: Դեպքի հետ կապված Փինք Արմենիան կոչ էր արել զերծ մնալ Ռոբերտ Ահարոնյանի դեմ հարձակումներից նաև նրան առաջարկել էր իր հոգեբանական ու սոցիալական աջակցությունը :

<sup>31</sup> ԱՄՆ դեսպանը, ՄԱԿ-ը և «Ֆրոնթլայն»-ը դատապարտել են Հայաստանում ԼԳԲՏԻ համայնքի նկատմամբ ճնշումները, <http://www.pinkarmenia.org/2015/11/us-un-frontline/>

<sup>32</sup> ԼԳԲՏ դրոշն այրած Ռոբերտ Ահարոնյանը ԼԳԲՏ համայնքի ներկայացուցիչ է. հաղորդագրություն (տեսանյութ), <http://goo.gl/dTRi97>

<sup>33</sup> Փինք Արմենիան կոչ է անում զերծ մնալ Ռոբերտ Ահարոնյանի դեմ հարձակումներից, [http://www.pinkarmenia.org/2015/11/solidarity\\_aharonyan/](http://www.pinkarmenia.org/2015/11/solidarity_aharonyan/)

## 1.4. Մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիությունը

1. Յուրաքանչյուր ոք ունի իր մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության իրավունք:
2. Մասնավոր և ընտանեկան կյանքի անձեռնմխելիության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ պետական անվտանգության, երկրի տնտեսական բարեկեցության, հանցագործությունների կանխման կամ բացահայտման, հասարակական կարգի, առողջության և բարոյականության կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն<sup>34</sup>

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը սահմանում է յուրաքանչյուր անձի օրենքի առջև իրավասությեկտության ճանաչման, ինչպես նաև գաղտնիության իրավունքը<sup>35</sup>: Այն ներառում է պետության պարտականությունը ճանաչելու անձի կողմից ընդունված իր սեռը և գենդերային ինքնությունը<sup>36</sup>, որպես անձի կողմից անձնական կյանքի իրավունքի իրականացման ապահովում:

«Անձնական կյանքը» լայն հասկացություն է, ներառում է անձի ֆիզիկական և հոգեբանական ամբողջությունը: Որոշ դեպքերում այն ընդգրկում է նաև անձի ֆիզիկական և սոցիալական ինքնության ասպեկտները: Այնպիսի հանգամանքները, ինչպիսիք են, օրինակ, անձի գենդերային նույնականացումը, անունը, սեռական կողմնորոշումը և սեռական կյանքը, տեղափորվում են մարդու անձնական և ընտանեկան կյանքի իրավունքի պաշտպանության համատեքստում<sup>37</sup>: Անձի մարմինը իր անձնական կյանքի առավել ինտիմ բաղադրիչն է հանարվում<sup>38</sup>:

Անձնական և ընտանեկան կյանքի իրավունքը նաև անձնականագարգացման, այլ անձանց հետ կապերի հաստատման և զարգացման հնարավորության ապահովման իրավունքը<sup>39</sup>, անձնական հարաբերությունների արդյունավետ իրացման, տվյալ հանրույթում ապահով նիշավայր ունենալու իրավունքը<sup>40</sup>:

### Տրամադրելու մարզիկի դեպքը

Տրամադրելու անձը, որը հայտնի մարզիկ է, պատմել է, որ «Ծիածան» ֆորումին մասնակցելուց հետո նրա աշխատավարձը չեն տվել ու հեռացրել են հավաքականից. «Հենց նյութերը ընկան կայք, մարզիս զանգեց ասեց՝ ես ինչ ես արել, քեզ չենք ասել քո կյանքն ա, ինչ ուզում ես արա, մենք քեզ ընդունել էինք, բայց ինչո՞ւ ես պրոպագանդա անում, սպորտից դուրս կգայիր ինչ կուգեիր կանեիր, գիտես, որ սպորտի մեջ չափությունը անեիր: Դրանից հետո սադա աշխատավարձ ստացան, ես՝ չեմ: Եթե աշխատավարձը կտրում են, ուրեմն դու հավաքականում չես», - պատմել է մարզիկը:

Ըստ նրա, հավաքականում խոսում են, որ նա «գեյերի ցույցին» է (այդպես են անվանում ԼԳԲՏ ֆորումը) մասնակցել, դրա համար են հանել հավաքականից, մասնավորապես մեկ այլ մարզիկ նրան հարցուել է. «Ծի՞շտ ա, որ գեյերի ցույցին ես մասնակցել աշխատավարձդ կտրում են, սպորտից հեռացրել են»:

<sup>34</sup> Հոդված 31, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ.

<sup>35</sup> Հոդված 16, «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» ՍԱԿ 1966թ. միջազգային դաշնագիր

<sup>36</sup> Տես 35 հոդվածներ 16 և 17, ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 16

<sup>37</sup> Տես 9

<sup>38</sup> Ե.Ֆ. ընդդեմ Թուրքիայի թիվ 24209/94 ՄԻԵԴ վճիռ

<sup>39</sup> Տես 38

<sup>40</sup> Քոննորսն ընդդեմ Միացյալ Թագավորության թիվ 66746/01 ՄԻԵԴ վճիռ

## 1.5 Օրենքի առջև հավասարության և հավասար պաշտպանվածության իրավունք

Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:...

Հոդված 61, մաս 1, ՀՀ Սահմանադրություն<sup>41</sup>

Հավասարության իրավունքի պաշտպանությունը ենթադրում է ոչ միայն պետության կողմից ուղղակի միջամտության արգելքը, այլև վերջինիս պարտավորությունը պաշտպանելու երրորդ անձանց կողմից հնարավոր միջամտությունից: Պետության կողմից նման միջամտության հանդուրժումն անթույլատրելի է, քանի որ այն կնշանակի, որ որոշ փոքրամասնությունների նկատմամբ նախապաշտումը ու խորականությունն արդարացված է և ընդունելի<sup>42</sup>: Այս իրավունքի պատշաճ իրականացումը նշանակում է պետության կողմից անհրաժեշտ օրենսդրական, վարչական և այլ միջոցառումներ իրականացնելու պարտականությունը, որոնք կապահովեն անձանց օրենքի առջև և փաստացի հավասարությունը<sup>43</sup>: Ավելին, հավասարության սկզբունքի ապահովումը չի նշանակում բոլորի նկատմամբ նույնանման վերաբերմունք նույնանման պայմաններում, այլև նշանակում է նաև պետության կողմից կառուցողական գործողությունների նախատեսում այն դեպքերում, եթե անհրաժեշտ է վերացնել կամ նվազեցնել այս կամ այն խմբի նկատմամբ խորականություն ծնող կամ խթանող պայմանները<sup>44</sup>:

### ԼԳԲՏ անձանց նկատմամբ իրավապահ մարմինների վերաբերմունքը

Փինք Արմենիայի գրանցած դեպքի համաձայն, անձին հետևել են 3 երիտասարդ տարիքի տղամարդ երևանի կենտրոնի տարածքում՝ Ջյուսիսային պողոտայի շրջանում: Որոշ ժամանակ հետևելուց հետո երեք տղամարդկանցից մեկը հարձակվել է նրա վրա, մյու երկուսն էլ նոտեցել են, սկսել են քաշքել: Թիչ անց այդ երեք անձինք դիմել են փախուստի: Անձը առանց վարանելու դիմել է երևան քաղաքի մոտակա՝ կենտրոնի ոստիկանության բաժանմունքը և ներկայացրել է բողոք, որում նշել է գործին առնչվող հանգամանքները: Ոստիկանության ծառայողների թելադրանքով կազմել է բողոքը, որտեղ նաև նշել է, որ երեք անձինք հավանաբար նպատակ չեն ունեցել իրեն կողոպտելու, քանի որ չեն վերցրել դրամապանակը, այլ իրեր, որոնք անձն ունեցել է իր մոտ: Քաշքուկի ժամանակ անձի հեռախոսն ընկել է գրանցից և նա գտնում է, որ այդ անձինք էլ վերցրել են իր հեռախոսը: Ոստիկանությունում նրան նաև հարցրել են, թե արդյոք հոմոսեքսուալ է, թե ոչ: Նա պատասխանել է՝ այս: Փաստը գրառում չի գտել բողոքի մեջ: Այս հարցից ենթադրելի է, որ ոստիկանությունը հավանաբար հասկացել է հարձակման շարժառիթը, թե ինչ պատճառով է այն տեղի ունեցել:

Փինք Արմենիայում գրանցված այլ դեպքի համաձայն, տրամադրելու անձը, որը մեղադրվում էր գողություն կատարելու մեջ, կանչվել է ոստիկանություն՝ բացատրություն տալու, ինչի ընթացքում նրա նկատմամբ ոստիկանության ծառայողները վատ վերաբերմունք են ցուցաբերել՝ ծաղրել են, օգտագործել վիրավորական բառեր, արտահայտություններ:

Նույնասեռական տղամարդը Փինք Արմենիային հայտնել էր, որ իրեն հետևում են իրենց քաղամասի ոստիկանության ծառայողները, ինչի կապակցությամբ մի քանի անգամ եկել են իրենց ծնողների բնակարան՝ պարզելու, թե որտեղ է նա գտնվում: Այլ մանրանաներ չեն տեղեկացրել: Դրանից հետո անձին մի քանի անգամ ոստիկանական մեթենան հետևել է, հետո զանգահարել են անձին և կամչել բաժանմունք, որը անձը մերժել է: Անձը կարծում

<sup>41</sup> Հոդված 61, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ, մաս 1

<sup>42</sup> Եհովայի վկաների Գրդանի Միարանություն ընդիեն Վրաստանի Թիվ 71156/01 Միե՞ն վճիր, §141

<sup>43</sup> ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 6

<sup>44</sup> ՄԻԿ Ընդհանուր մեկնաբանություն 18, մաս 10

է, որ ոստիկանության ծառայողները իրեն փնտրում են այն պատճառով, որ իմացել են իր սեռական կողմնորոշման մասին՝ հավանաբար զինվորական ծառայությունից ազատվելու հանգամանքը հաշվի առնելով:

Փինք Արմենիայում մեկ այլ գրանցված դեպքի համաձայն, Գյումրիում բնակվող անձին, անընդմեջ զանգահարել են Երևանի ոստիկանությունից և պահանջել ներկայանալ Երևան քաղաքի ոստիկանության համապատասխան բաժանմունք: Ոստիկանության ծառայողները չեն նշել, թե կոնկրետ ինչի համար են կանչում, ինչպես նաև չեն տեղեկացնում, թե ինչ կարգավիճակով են նրան հրավիրում բաժին: Ըստ նրա, կանչի պատճառը կապված է եղել իր սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հետ:

### **Իրավունք թերթի դեմ դատավարությունները**

Իրավունք թերթի դեմ 16 քաղաքացիների հայցը, որն 2014թ. մերժվել էր ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանում, 2015թ. մերժվեց նաև վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում: Գործն ուղարկվել է Սարդու իրավունքների եվրոպական դատարան:

Իրավունք թերթը 2014թ. հոդված էր իրապարակել «Նրանք սպասարկում են միջազգային համասեռամոլ լորբինգի շահերը. ազգի և պետության թշնամիների սև ցուցակ» վերնագրով, որում ներկայացված էր 60 անձանց անուններից բաղկացած սև ցուցակ և որում կոչ էր արվում այդ մարդկանց նկատմամբ «զրո հանդուժողականություն» ցուցաբերել, աշխատանքի ընդունել, հեռացնել պետական ծառայությունից ու տեսնելիս չքարել, ինչպես նաև անվանել էր նրանց «զոնքի», «ազգի և պետության թշնամի»: Իրավունք թերթն այդ մարդկանց անուններն էր իրապարակել, քանի որ նրանք Ազատություն ո/կ «Ֆեյսբուքյան ասուլիս»-ի ժամանակ բննադատել էին երգչուիիներ Ինգա և Անուշ Արշակյաններին՝ ավստրիացի երգչուիի Կոնչիտա Վուլստի նկատմամբ իրենց «զզվանքն» արտահայտելու համար: Ցուցակից 16 հոգի համատեղ հայցով դատարան էին դիմել:

Վերաքննիչի դատական նիստի ավարտից անմիջապես հետո դատավոր Նախշուն Տավարացյանը մեղադրող կողմին հարցրեց. «Կոնչիտան գիտի<sup>45</sup>, որ իրան էսքան պաշտպանում եք», ինչն ընկալվեց, որ դատավորը գործի նկատմամբ կանխակալ վերաբերմունք ունի<sup>45</sup>:

Վերաքննիչի նիստից առաջ ԵԽՆՎ 22 պատվիրակներ հայտարարություն էին տարածել, որտեղ ուշադրություն էին իրավիրել այն փաստին, որ Յայաստանի իշխանություններն անպատիժ են բողնում ատելության կոչ ու խտրականություն տարածող Իրավունք թերթին ու կոչ էին արել Վեհաժողովում Յայաստանի պատվիրակներին, հատկապես՝ Յանրապետական կուսակցության ներկայացուցիչներին, իրենց գործընկերներին հասկացնել, որ պետք է գերծ մնալ ատելության ու խտրականության խթանումից: Այս հայտարարությունը Փինք Արմենիան ուղարկել էր ՀՀԿ պատգամավոր, ԵԽՆՎ-ում Յայաստանի պատվիրակ Ներմինե Նաղդայանին՝ ինանալու թե արդյոք նա տեղյակ է ԵԽՆՎ-ի կոչից և ինչ քայլեր են ձեռնարկելու, ինչին ի պատասխան Նաղդայանն ուղարկել էր Իրավունք թերթի երկու տպագիր օրինակ:

16 քաղաքացիները գործը բողոքարկել էին Վճռաբեկ դատարան, որն այն ստացել էր ապրիլի 20-ին, ապրիլի 29-ին դատարանը վարույթը մերժելու որոշում էր կայացրել, ու եթե հաշվի առնենք, որ ապրիլի 23, 24, 25, 26 ոչ աշխատանքային օրեր են եղել, ստացվում է, որ դատարանը վճիռը կայացրել է առավելագույնը 5 օրվա ընթացքում:

Նույն հոդվածի առնչությամբ «Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ի 3 աշխատակիցների

<sup>45</sup> «Իրավունք»-ի գործը վճռված՝ է իրապարակելուց առաջ, <http://goo.gl/eOEaMY>

հայցը ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանը մասնակիորեն բավարարել էր՝ թերթին պարտավորեցնելով իրապարակայնորեն ներողություն խնդրել բոլոր հայցվորներից և 250 հազար դրամ վճարել հայցվորներից երկուսին։ Կողմերը վճիռը բողոքարկել են, սակայն Վերաբննիշ դատարանը որոշումը նույն է թողել։

Նույն հոդվածի կապակցությամբ առաջին հայցով դատարան էր դիմել «սև ցուցակում» հայտնված մեկ այլ՝ իրանի քաղաքացի, որի բողոքը ընդհանուր իրավասության դատարանը մերժել է։

«Նոր սերունդ» մարդասիրական ՀԿ-ն նույն թերթի և թերթի լրագրող Իլոնա Ազարյանի դեմ ևս մեկ դատական հայց էր ներկայացրել, այս անգամ վերը նշված լրագրողի «Երբ համասեռամոլների գրանտաժիծ պաշտպանները պետական աջակցություն են ստանում» հոդվածի համար։ Սակայն ընդհանուր իրավասության դատարանը մերժել էր հայցը ու կազմակերպությանը պարտավորացրել «իրավունք Մեղիա» ՍՊԸ-ին և Ազարյանին 100 հազար դրամ վճարել։

## 1.6 Արդարադատության մատչելիության և իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի իրավունք

«Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքները և ազատությունները օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իրավունք...»:

Յողված 18, ՀՀ Սահմանադրություն<sup>46</sup>

«Յուրաքանչյուր ոք ունի իր խախտված իրավունքները վերականգնելու, ինչպես նաև իրեն ներկայացված մեղադրամի հիմնավորվածությունը պարզելու համար հավասարության պայմաններում, արդարության բոլոր պահանջների պահպանմամբ, անկախ և անկողմնակալ դատարանի կողմից խելամիտ ժամկետում իր գործի հրապարակային քննության իրավունք...»:

Յողված 19, ՀՀ Սահմանադրություն<sup>47</sup>

Չնայած նրան, որ Յայաստանի Յանրապետության Սահմանադրությամբ և ներքին օրենսդրության նաս կազմող միջազգային պայմանագրերով ճանաչված են արդարադատության մատչելիության և արդար դատաքննության իրավունքները, ՀՀ ներպետական ատյաններում դրանց գործողությունը սահմանափակվում է՝ ՀՀ ազգային դատարանների կողմնակալության և իշխանության մյուս ճյուղերից կախյալ լինելու, իշխանությունների տարանջատման և զսպման մէխանիզմների՝ Սահմանադրությանը համապատասխան չգործելու հետևանքով։ Նման պնդման համար հիմք է հանդիսացել օրինակ Իրավունք թերթի դեմ գործով վճռը (կայացված 2015թ.), ինչը կայացվել է ՀՀ ԱԺ պատգամավոր Յայկ Բաբուկանյանի՝ ԼԳԲՏ անձանց վիրավորող արտահայտությունների և վերջինիս կողմից ամեն կերպ դատավարության ընթացքի վրա ազդելուն ուղղված գործողությունների արդյունքում։ Դատարաններում գործերի քննության վրա ազդեցություն են ունենում նաև գեկուցում արդեն իսկ նշված պետական պաշտոնյաների կողմից հնչեցված ատելության խոսք համարվող արտահայտությունները, որոնք կարող են դատարաններին կաշկանդել որոշումներ կայացնելիս։

ԼԳԲՏ անձանց համար իրավական պաշտպանության արդյունավետ միջոցի բացակայությունը այս տարվա ընթացքում ևս պայմանավորված է եղել մի շարք հիմնախնդիրներով՝ օրենսդրական համապատասխան կարգավորումների բացակայությունը, իրավախախտումներից տուժած անձանց կողմից բողոքներ չներկայացնելը, իսկ ներկայացնելու դեպքում՝ իրավապահ նարմինների վատ վերաբերմունքը, դատարանի կողմից գործի ոչ պատշաճ քննությունը, ինչպես նաև պետական նարմինների կողմից վատ վերաբերմունքի խրախուսումը։

### Օրենսդրական խնդիրներ

Թեև Սահմանադրության անմիջական կիրառությունը նախատեսված է հենց ՀՀ Սահմանադրությամբ, որով նախատեսված է խտրականության արգելքը, գործնականում ներպետական դատարանները պրակտիկայում անմիջականորեն չեն կիրառում Սահմանադրական նորմերը, եթե դրանք մանրամասն կարգավորում չեն ստացել այլ օրենքներով կամ ենթաօրենսդրական ակտերով։ Այս արտավոր պրակտիկայի արդյունքում ՀՀ-ում խտրականության կոնտեքստում կատարված որևէ հանցանք կամ այլ բնույթի իրավախախտում որպես այդպիսին չի որակվում։

ՀՀ-ում դեռևս չի ընդունել խտրականության դեմ պայքարի առանձին օրենք, որը հնարավորություն կտա սահմանելու խտրականություն հասկացությունը, տեսակները, խտրականության ենթարկված անձանց իրավական պաշտպանության միջոցները և եղանակները, խտրականության դեպքերի քննության առանձնահատկություններին

<sup>46</sup> Յողված 18, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ

<sup>47</sup> Յողված 19, ՀՀ Սահմանադրություն, ընդունված 06.12.2015թ

վերաբերող կարգավորումները, ինչը նշանակում է, որ խտրականությունից տուժած LԳԲՏ անձինք չեն ունեցել պաշտպանության արդյունավետ միջոց և իրենց նկատմամբ խտրականության դեպքերը պատշաճ կերպով չեն բացահայտվել և համապատասխան քննության չեն արժանացել:

Բացի որանից ՀՀ ներպետական օրենսդրությամբ նախատեսված ատելության խոսքի իրավական կարգավորումները խիստ սահմանափակ են և չեն նախատեսում անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ատելության սերմաննան արգելքը: ՀՀ քրեական օրենսգրքի 237-րդ հոդվածը սահմանում է ազգային, ռասայական կամ կրոնական թշնամանք հարուցելու արգելքը, որը, սակայն, չի ներառում անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով ատելության սերմաննան արգելքը: Արդյունքում ատելության տարածման վերոնշյալ դեպքերով համապատասխան քննություն իրականացնելու և դատական գործընթաց սկսելու իրավական հնարավորությունը նույնպես բացակայում է:

ՀՀ-Ն դեռևս չի վերանայել ատելության հիմքով կատարվող հանցագործությունների համար իրավական պատասխանատվության մեխանիզմները: Անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության շարժառիթով կատարված հանցագործությունները շարունակում են մնալ առանց պատշաճ քննության:

Արարքը ատելության շարժառիթով կատարելը քրեական օրենսգրքի իմաստով համարվում է ծանրացնող հանգամանք, սակայն խոսքը վերաբերում է միայն ազգային, կրոնական կամ ռասայական ատելությանը: Հանցանքը խտրականության հիմքերից մեկով պայմանավորված կատարելու հանգամանքը քրեական օրենսգրքով նախատեսված չէ, ինչը հնարավորություն է տալիս ներպետական ատյաններին քննության չառնել անձի հասցեին հնչած սպառնալիքի բնույթն ու շարժառիթը, իսկ պարզապես սպառնալիքի վերաբերյալ հաղորդում ստանալու դեպքում գործին ընթացք չի տրվում՝ պարզաբանելով, որ սպառնալիքները պետք է լինեն իրական: Համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 63-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանքներ են՝ հանցանքն ազգային, ռասայական կամ կրոնական ատելության, կրոնական մոլեռանդության, այլ անձանց իրավաչափ գործողությունների համար վրեժի շարժառիթներով կատարելը:

Ինչպես նշվեց դեպքերի մասում, LԳԲՏ անձանց կամ որպես ԼԳԲՏ ասցացվող անձանց կողմից ներկայացված բողոքների մեջ մասը վերաբերում է առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքին: Այսպես, ՀՀ քրեական օրենսգրքի 137-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսված սպանության, առողջությանը ծանր վնաս պատճառելու կամ գույք ոչնչացնելու սպառնալիքի համար, որի իրականացման իրական վտանգ է առկա: Այսինքն, տվյալ հանցագործությունը կարող է կատարվել ցանկացած շարժառիթով: ՀՀ քրեական օրենսգրքով կամ որևէ այլ օրենքով նախատեված չէ պատասխանատվություն սպառնալիքի համար, որն իրականացվել է անձի իրական կամ ենթադրյալ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով:

### **Մինչդատական և դատական խնդիրներ**

Նախնական քննություն իրականացնող մարմինների կողմից վատ վերաբերմունքը, ինչպես նաև գործի ոչ պատշաճ նախնական քննությունը հանգեցնում են նրան, որ գործերը հաճախ դատարան չեն հասնում, և անձը գրկվում է անկախ և անաշար դատարանի կողմից իր իրավունքների խախտման դեպքի քննության հնարավորությունից:

2015թ կտրվածքով ներկայացված գրեթե բոլոր բողոքներով իրավապահ մարմինների կողմից նախնական քննության ընթացքում քրեական գործեր չեն հարուցվել, իսկ հարուցվելու դեպքում շուտ կարճվել են՝ հանցակազմի բացահայտյան պատճառով,

ինչպես, օրինակ, դաեղավարդան Համբարձումյանի դեպքում, երբանձը շարունակաբար ստանում էր սպառնալիքներ՝ ուղղված իր և իր ընտանիքի դեմ:

Նմանատիպելք ստացավնաև ԼԳԲՏ «Ծիածան» ֆորումի արդյունքում դրամասնակիցների հասցեին սոցիալական ցանցերում և այլ միջոցներով հնչեցված սպառնալիքների առիթով վերջիններիս կողմից ուստիկանություն ներկայացրած բողոքների քննությունը:

Նախնական քննության մարմինների կողմից գործին ընթացք չտալու հանգամանքը նաև պայմանավորված է օրենսդրական բացով, ինչը նշվեց վերը: ՀՀ-ում բացակայում է խտրականության արգելքի մասին առանձին օրենք, որը կտա խտրականության տեսակների մանրամասն սահմանում: Վերոնշյալ դեպքերում անձինք իրենց խախտված իրավունքների վերականգնման, կոնկրետ իրավունքների պարբերաբար և շարունակական խախտումների դադարեցման և իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու արդյունքին դատարաններում չեն հասնում: Դատարանը, որպես արդարադատություն իրականացնող միակ մարմին, իրավախախտումների վերաբերյալ գործերի քննության ընթացքում բազմաթիվ նյութափակական և դատավարական նորմերի խախտումներ թույլ տալով դրսևորում է ոչ պրոֆեսիոնալ, խտրական վերաբերմունք՝ արդյունքում ձախողելով իրականացնել իր հիմնական գործառույթը: Դա եղավ, օրինակ, «Իրավունք մեջիա» ՍՊԸ-ի դեմ դատավարության արդյունքում, երբ դատարանը շճանաչեց ատելության խոսքից տուժած անձանց իրավունքի խախտման փաստը և վիճարկող արտահայտությունների խտրականությամբ պայմանավորված լինելը:

Արդյունքում, իրավախախտումներից տուժած անձինք, դիմելով դատական պաշտպանության, բախվում են իրենց նկատմամբ նույն խորական վերաբերմունքին՝ հայտնվելով առավել անբարենպաստ վիճակում: Դատարանների վճիրները ոչ միայն չեն հանգեցնում իրավախախտումների պատասխանատվության և նոր իրավախախտումների կանխման, այլ նաև խորացնում են ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակական տարբեր շերտերում առկա ատելության մթնոլորտը՝ որան հաղորդելով իրավական, դատարանների կողմից պաշտպանված հիմք:

### **Իրավախախտումներից տուժած անձանց կողմից բողոքներ չներկայացնելու այլ պատճառներ**

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների պարբերաբար և անպատիժ խախտումների արդյունքում վերջիններս հրաժարվում են դիմել դատարան կամ համապատասխան այլ մարմին՝ չակնկալելով արդարադատություն: Կազմակերպության կողմից ստացված բողոքների բնույթից, ինչպես նաև իրավախախտումներից տուժած անձանց վկայություններից պարզ է դառնում, որ տուժած անձանց կողմից բողոքներ չներկայացնելը խորը արմատներ ունի և պայմանավորված է մի շարք մտահոգիչ գործոններով, որոնք, ի թիվս այլոց, ներառում են տուժած անձի մտավախտությունը, որ իր սեռական կողմնորոշումը և/կամ գենդերային ինքնությունը կրացահայտվի այլ անձանց շրջանում, իրավասու մարմինների կողմից սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության վերաբերյալ անձնական գաղտնիք համարվող տեղեկատվությունը կրացահայտվի երրորդ անձանց շրջանում, կարժանանա խորական վերաբերմունքի իր կողմից ներկայացված բողոքի արդյունքում:

ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների խախտումները հիմնականում այս կամ այն կերպով կապված են անձի սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հետ, ինչը, տուժած անձը չի ցանկանում հայտնի դարձնել իրավապահ մարմին կամ համապատասխան այլ մարմին բողոք ներկայացնելու դեպքում, քանի որ կաշկանդված է վերջինիս տարբերակված վերաբերմունքով՝ կապված անձի արտաքին տեսքով, ֆեմինին կամ այլ տարբերակվող հատկանիշներով:

Տուժող անձը սույնով խուսափում է նաև իրավապահ մարմինների կողմից վիկտիմի-

զացիայի ենթարկվելու հնարավորությունից, քանի որ հիմնականում նախկինում ներկայացված բողոքները անձի համար հանգեցրել են բացասական հետևանքների:

Օրինակ՝ 2015թ. օգոստոսի 26-ի լուս 27-ի գիշերը Երևանի կենտրոնում 2 տրամսգենդեր անձանց ծեծի կապակցությամբ անձը ի սկզբանե ուներ հիմնավոր նտավախություն գործի պատշաճ քննության կապակցությամբ, քանի որ նախկինում բողոք ներկայացնելու արդյունքում անձն արժանացել էր խորական վերաբերմունքի ուստիկանության ծառայողների կողմից, ինչը սույն գործի շրջանակներում ևս արտահայտվել է ուստիկանության ծառայողների վիրավորական, ծաղրանք և հեգնանք պարունակող արտահայտություններով, ինչը եղել է շարունակական ողջ նախնական քննության ընթացքում: Գործի մինչդատական քննության ընթացքում անձի գենդերային ինքնության վերաբերյալ տեղեկատվությունը հայտնի է դարձել այլ անձանց, այդ թվում՝ տուժող ընտանիքի անդամներին և այլ հարազատներին, ինչի արդյունքում վերջիններս «Երես են թեքել» իրենից, ինչպես նաև հրաժարվել որևէ կապ պահպանելուց: Արդյունքում անձը հետ է վերցրել բողոքը, իսկ քրեական գործը կարճվել է:

Մրանով է պայմանավորված այն հանգամանքը, որ մարդու իրավունքների խախտումների գործերը հիմնականում համապատասխան ընթացք չեն ստանում, քանի որ տուժող անձինք վերոհիշյալ մի շարք գործոնների ազդեցության պայմաններում հրաժարվում են ընթացք տալ կամ շարունակել իրենց բողոքների համապատասխան քննությունը:

Բացի վերոնշյալ հանգամանքներից արդարադատության մատչելիության սկզբունքը խախտվում է նաև դատական և իրավապաշտպան համակարգի՝ իրապարակայնության կանոնների, ինչպես նաև պաշտպանիչ և կանխարգելիչ գործառույթների չկայացածքածության պատճառով: Մասնավորաբես անձինք, ում իրավունքները խախտվել են պայմանավորված սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խտրականությամբ, հրաժարվում են իրացնել իրենց՝ խախտված իրավունքների դատական պաշտպանության իրավունքը, վախենալով, որ իրենց սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության փաստը հայտնի կդառնա հասարակության հոնքոր խմբերին և իրենք չեն կարող ակնկալել իրավապահ մարմինների կողմից պատշաճ պաշտպանություն:

Իրավապահ մարմինների անգործությունը, հանցագործությունների կանխարգելամ գործում ձախողունք, ինչպես նաև դատարանի կողմից՝ սոցիալական արդարության վերականգնան, իրավախախտներին պատասխանատվության ենթարկելու միջոցով դաստիարակման և հետագա նույնաբռնության իրավախախտումների կանխման խնդիրների ձախողունքը շարունակաբար հանգեցնում է արդարադատության մատչելիության սահմանափակմանը, քանի որ իրավախախտում կատարված անձինք, մնալով անպատճ, շարունակում են իրենց հանցավոր գործունեությունը՝ գիտակցելով խնդրի գայունությունը և պատասխանատվությունից խուսափելու հնարավորությունը:

### **«Ա Թի Վի»-ի եթերում հնչած քրեական քնույթի մեղադրանքները**

2014թ. «Ա Թի Վի» եթուտաընկերության «Կիսարաց լուսամուտներ» հաղորդման ժամանակ Միացյալ Երիտասարդական լիգա կոչվող կազմակերպության համանախագահ Սևակ Հովհաննիսյանը հայտարարել էր, որ երգիչ Յ.Յ. բռնաբարել է 16-ամյա տղայի: Հաղորդման ժամանակ նաև տեսանյութ է ցուցադրվել, որտեղ երևում է Յ.Յ.-ի դեմքը: Նախ դեպքի առիթով քրեական գործ էր հարուցվել, որը կարծվել էր Հովհաննիսյանի ապացույցների բացակայության պատճառով, այնուհետև Յ.Յ.-ը էր Հովհաննիսյանի դեմ դատական հայց ներկայացրել՝ պատիվն ու արժանապատվությունը վիրավորելու մեղադրանքով: Մեկ տարուց ավել է՝ գործ դատարանում է, սակայն Սևակ Հովհաննիսյանը չներկայանալու պատճառով նիստերն անըդիատ հետաձգվում է, իսկ դատարանը բերման ենթարկելու որոշում այդպես էլ չի կայացնում: Այդուհանդերձ, Սևակ Հովհաննիսյանը շարունակում է նույնասեռականների դեմ ելույթներով հանդես գալ:

## **2. Անձի իրավունքներն ապահովելու, ապահով միջավայր ստեղծելու պետության պարտականությունը**

### **Սահմանադրության փոփոխություններ**

2015թ. նույնասեռականների վերաբերյալ քննարկումներն առավել ակտիվացան սահմանադրական փոփոխությունների քննարկումների ժամանակ, երբ թվայցալ իրավիճակ էր ստեղծվել, թե նոր սահմանադրությամբ թույլատրվելու են նույնասեռականների ամուսնությունները: Որոշ ԶԼՄ-ների, հասարակական ու քաղաքականգործիչների համար հանրաքվեհորված Սահմանադրության քննարկումների հիմնական թիրախն ու մտահոգությունը այդ էր:

Սահմանադրության նախագծում ամուսնանալու ազատությանը վերաբերող հոդված 34-ում գրված էր. «Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդն իրենց կամքի ազատ արտահայտությամբ նիմյանց հետ ամուսնանալու ու ընտանիք կազմելու իրավունք ունեն», մինչդեռ Վենետիկի հանձնաժողով ուղարկված անգլերեն տարբերակում կին և տղամարդը հոգնակի թվով էր գրված և բացակայում էր միմյանց հետ արտահայտությունը, ինչը շատերի մոտ այն տպավորությունն էր, թե թույլատրվելու նույնասեռ ամուսնությունները:

Դարցը բարձրացավ, երբ 1in.am-ը «Վենետիկի հանձնաժողովը դեմ է Հայաստանում միասեռ ամուսնությունների համար սահմանադրական արգելքին» վերարտադրությամբ հոդվածը հրապարակեց<sup>48</sup>:

Ազգային ժողովի նախակին պատգամավոր Գուրգեն Եղիազարյանը ասուլիսի ժամանակ հայտնել էր, որ 34-րդ հոդվածը ամենասարսափելի կետն է. «Եթե միասեռականների ամուսնություններն օրինականացվեն և գեյերի պսակադրություն կատարվի, ապա այդ գեյերը մեզ կուտեն», - ասել է նա<sup>49</sup>:

Ելեկտրակերգիայի թանկացման դեմ ամենաակտիվ պայքարողներից մեկը՝ Վաղինակ Շուշանյանը, հեռուստատեսային հաղորդման ժամանակ մարդկանց համոզում էր դեմ թվեարկել նոր Սահմանադրությանը, քանի որ գեյերին ծեծելու հնարավորություն այլս չեն ունենա<sup>50</sup>. «Ախաբեր, գոնե հմի բռնում տփում ենք, ախաբեր, բռնում տփում ենք գոնե», - ասում էր նա՝ համոզելով, որ եթե նոր Սահմանադրությամբ նույնասեռականներին ծեռք տա, իրեն ցմահ կդատեն: Քաղաքացիներից մեկը՝ ասելով, որ դրա համար դատ է հասնում նաև ներկա Սահմանադրությամբ, Շուշանյանն ասում է, որ եթե «գոնիկ» ցույց տա, ինքը «կտիի»:

ՀՀԿ Աժ պատգամավոր Նահիա Կարապետյանը Աժ-ում ելույթ ունենալիս, հանգստացնում էր իր գործընկերներին՝ վստահեցնելով, որ նույնասեռ ամուսնությունները չեն թույլատրվելու<sup>51</sup>. «Մեր ժողովրդին խորը են և անընդունելի միասեռականների ամուսնությունները: Այս է պատճառը, որ Ցեղասպանության ենթարկվելով և ոչնչացման վտանգի միջով անցնելով հայ ժողովուրդը ընտանիքը համարել է ու համարում է բացառապես կնոջ և տղամարդու միությունը, որն ապահովում է իր կենդանությունը երկրի երեսին»:

ՀՀԿ խմբակցության պատգամավոր, պետականական հանձնաժողովի նախագահ Հովհաննես Սահակյանը aravot.am-ին տված հարցազրույցում ասել էր. «Մենք հայ

<sup>48</sup> Վենետիկի հանձնաժողովը դեմ է Հայաստանում միասեռ ամուսնությունների արգելքին, <http://www.1in.am/1686315.html>

<sup>49</sup> Իշխանական օղակներից կարծես, մաքրում ենե ոչ ավանդական սեռական ուղղվածություն ունեցողներին, <http://www.aravot.am/2015/08/06/598992/>

<sup>50</sup> Իշխանությունը փոխեք, սահմանադրությունը փոխում եք, ի՞նչ անենք, <https://goo.gl/86khYg>

<sup>51</sup> Թյուր կարծիք է, թե նոր սահմանադրությունը հովանավորում է միասեռականներին (տեսանյութ), <http://www.a1plus.am/1406651.html>

Ենք, ունենք մեր մենթալիտետն ու մոտեցումերը: Ես անում ու անելու եմ ամեն ինչ, որ ամուսնությունները լինեն կնոջ և տղամարդու միջև: Դա անձանք ինձ և շատերի համար քննարկման առարկա էլ չէ»<sup>52</sup>:

Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամ Գևորգ Ղանիեյանը նույնասեռ ամուսնություններին դեմ արտահայտվողներին և հանգստացնում էր, որ այդ հարցը փակված է<sup>53</sup>. «Հարգելիներս, ինչ պետք է, արդեն արված է, և արված է միանգամայն ողջամիտուգիտականորեն հիմնավորված փաստարկներով: Սասանավորապես մեր հստակ ոիրքորոշումն այն է, որ միասեռ ամուսնությունները ոչ միայն խարարում են ազգային արժեհամակարգը, այլև համահունչ չեն երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային իրավական չափանիշներին: Միջազգային փորձագետները, նախ պետք է փորձեն հիմնավորել, որ միասեռ ամուսնությունները չեն խարարում ինչն եվլուպական արժեհամակարգում առանցքային տեղ ունեցող երեխաների օրինական շահերը», - ասել է նա «Հայոց աշխարհ» թերթին տված հարցազրուցում:

Աժ-ում Սահմանադրության փոփոխությունների քննարկման ժամանակ մասնակիցներից մեկը բանախոսներին մեղադրեց, որ Սահմանադրության նախագծով ուզում են թույլատրել նույնասեռ ամուսնությունները, ինչին ի պատասխան Արդարադատության նախկին նախարար, Սահմանադրական փոփոխությունների հանձնաժողովի անդամ Յայոյր Թովմանյանն ասաց. «Ինչպես ուզում եք դա հասկացեք և ինչպես ուզում եք մեկնաբանեք: Միասեռ ամուսնությունները ՀՀ Սահմանադրությամբ ընտանիք չեն և չեն կարող դիտարկվել որպես ընտանիք, գտնվել պետության հոգածության տակ, չեն կարող համարվել հասարակության բնականոն բջիջ»<sup>54</sup>:

Ի վերջո, նոր Սահմանադրությամբ, նույնասեռ ամուսնությունների արգելքն ընգծելու համար հոդված 34-ը ստացավ հետևյալ տեսքը. «Ամուսնական տարիքի հասած կինը և տղամարդը միմյանց հետ իրենց կամքի ազատ արտահայտությամբ ամուսնանալու և ընտանիք կազմելու իրավունք ունեն»: Յան Սահմանադրության մեջ ամուսնությանը վերաբերող հոդվածը սահմանված էր այսպես. «Ամուսնական տարիքի կանայք և տղամարդիկ ունեն ամուսնանալու և ընտանիք ստեղծելու իրավունք»: Յանրաքվեի արդյունքում նոր Սահմանադրությունն ընդունվեց, և, այսպիսով, Յայաստանում Սահմանադրության մակարդակով արգելք դրվեց նույնասեռ ամուսնությունների վրա:

Մինչ սահմանադրական փոփոխությունների քննարկումները Յոնոֆրիայի և տրանսֆորմիայի դեմ պայքարի միջազգային օրվան ընդառաջ Փինք Արմենիան նախակներ էր ուղարկել ՀՀ նախագահին, վարչապետ Յովիկ Աբրահամյանին, առողջապահության, արդարադատության նախարարություններին և Աժ պատգամավորներին, որտեղ կոչ էր արված հարգել ԼԳԲՏ անձանց իրավունքները:

Նախագահի աշխատակազմից պատասխանել էին ՀՀ օրենսդրության մեջ առկա են անհրաժեշտ նախադրյալներ՝ խորականության որևէ դրսևորում բացառելու համար ու ավելացրել էին, որ եթե առկա է հավելյալ օրենսդրական կարգավորումների անհրաժեշտություն, ապա ՀՀ նախագահը օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված չէ<sup>55</sup>:

Նամակում Փինք Արմենիան նախագահին նաև հորդորել էր, որ պետական նշանակության մեղալով չպարզեատրի այն անձանց ու կազմակերպություններին, որոնք ԼԳԲՏ անձանց և նրանց իրավապաշտպանների դեմ ատելության կոչեր են տարածում, ինչին նախագահի

<sup>52</sup> Յովիկաննես Սահմանադրության. «Ես անում եմ ու անելու եմ ամեն ինչ, որ ամուսնությունները լինեն կնոջ և տղամարդու միջև», <http://www.aravot.am/2015/08/21/601719/>

<sup>53</sup> Գևորգ Ղանիեյան. Միասեռ ամուսնությունների հարցը մեկը նույնական փակված է. «Հայոց աշխարհ», <http://www.aravot.am/2015/08/27/603132/>

<sup>54</sup> Բուրն բանավեճ միասեռ ամուսնությունների շուրջ Աժ-ում, <http://goo.gl/6FqZXI>

<sup>55</sup> Նախագահի աշխատակազմից և նախարարություններից ստացված պատասխանը՝ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության վերաբերյալ, <http://www.pinkarmenia.org/2015/07/staterespond/>

աշխատակազմից պատասխանել էին, որ պետական պարգև տալուց հաշվի չի առնվում անձի աշխարհընկալումը:

Նախարարություններից պատասխան էր ստացվել միայն առողջապահության և արդարադատության համակարգերից:

Արդարադատության նախարարությունից տեղեկացրել էին, որ «Խոտրականության դեմ պայքարի մասին» առանձին օրենքը ընդունելու նպատակահարմարության քննարկումների շրջանակներում իրավական ուսումնասիրություն է կատարվել, որտեղ վերլուծվել են խոտրականության արգելմանը վերաբերող հարցերը և հիշեցրել էին, որ 2010թ. հավանություն է տրվել Գենդերային քաղաքականության հայեցակարգին, իսկ 2011թ. հաստատվել է ՀՀ գենդերային քաղաքականության 2011-2015 թթ. ռազմավարական ծրագիրը:

Առողջապահության նախարարությունից հայտնել էին, որ խնդրի կարգավորումը դուրս է ՀՀ իրենց իրավասությունների շրջանակներից, թեև համապատասխան մարմիններից առաջարկներ ստանալու դեպքում պատրաստ են աջակցություն ցուցաբերել:

Վարչապետն ու Աժ 131 պատգամավորներից որևէ մեկը չեղ արձագանքել իրենց հասցեագրված նամակին:

Այսպիսով, սահմանադրական փոփոխությունները ցույց տվեցին, որ Հայաստանի իշխանությունները շահագրգուված չեն ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությամբ, դեռ ավելին հակված են նրանց իրավունքներն ավելի սահմանափակելուն: Մինդեռ 2015թ. ՄԱԿ-ի Համընդիանուր պարբերական դիտարկման ժամանակ ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանությանն վերաբերյալ բոլոր 6 առաջարկությունները Հայաստանն ընդունել են:



## Եղբակացություն

Այսպիսով, ԼԳԲՏ անձանց մարդու իրավունքների վիճակը շարունակում է մնալ մտահոգիչ, ինչին նպաստող հանգանակները բազմազան են՝ կապված օրենսդրահրավական ոչ բավարար կարգավորումների, պետական մարմինների կողմից ատելություն սերմանող վերաբերնունքի, իրազեկվածության պակասի և այլ գործոնների հետ:

ՀՅ իշխանությունները Յայաստանի ԼԳԲՏ քաղաքացիների համար ապահով միջավայր և հավասար հնարավորություններ ստեղծելու փոխարեն էլ ավելի են սրում նրանց խնդիրները՝ թույլ տալով ոչ միայն ատելության խոսքի դրսնորումներ, այլ նաև նման խոսքի կամ խորականության այլ դրսնորումների նկատմամբ խրախուսական վերաբերնունք՝ չկիրառելով կամ սխալ կիրառելով օրենքի՝ նման արարքների համար պատասխանատվություն նախատեսող դրույթները։ Դա պարզ է դառնում թե՝ իշխող Յանրապետական կուսակցության և խորհրդարանական այլ խմբակցությունների անդամների ելույթներից, թե՝ նրանց կողմից ԼԳԲՏ անձանց իրավունքների ուժնահարման դեպքերից կամ օրենքով նոր սահմանափակումներ նախատեսելու միտումից։

ԼԳԲՏ անձանց նկատմամբ հասարակության վերաբերնունքը ավելի ու ավելի բացասական է դառնում, իսկ պետությունը ոչ մի քայլ չի ձեռնարկում երևույթը վերացնելու համար։ Նկատվում է անձի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունների թվի աճ։ 2015թ. գրեթե չի եղել ոլորտ, որտեղ ԼԳԲՏ անձինք խորականության գոհ չդառնան։

Այսպիսի անապահով միջավայրի պատճառներից է նաև ԼԳԲՏ անձանց իրավունքների սահմանափակումներն ու նրանց նկատմամբ խորականության արգելքին վերաբերող օրենսդրական բացը, ինչի մասին խոսվում է արդեն տարիներ շարունակ։ Խորականության արգելքի վերաբերյալ դոկութ է նախատեսված ինչպես ՀՅ Սահմանադրությամբ, այլ նաև ՀՅ ներաբետական օրենսդրության նաև կազմող միջազգային պայմանագրերով ինչը, սակայն, չի ապահովում ԼԳԲՏ անձանց՝ զերծ մնալ պետական մարմինների կողմից խորական վերաբերնությունից։ Իշխանությունները խուսափում են տարբեր պետությունների կողմից առաջարկված օրենսդրական լուացուցիչ կարգավորումներից, որոնցով մասնավորապես կարգելվի սեռական կողմնորոշման կամ գենդերային ինքնության հիմքով խորական վերաբերնունքի դրսնորումները։ ԼԳԲՏ անձանց՝ իրենց իրավունքներն հավասարության պայմաններում իրացնելու համար մնում է ապավինել միայն ՀԿ-ներին։

Յայաստանում լայն տարածում ունեն ոչ միայն անձի սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խորականության դեպքերը, այլ նաև ԼԳԲՏ անձանց հետ ասոցացման հիմքով խորականության դրսնորումները։ Ատելություն և խորականություն սերմանող խոսքը է ոչ միայն ԼԳԲՏ անձանց վրա, այլև իրենց աջակիցների կամ վերջիններիս հետ այլ կերպ կապված անձանց վրա, ինչը շատերին կարող է սահմանափակել իրենց գործողություններուն։

Այսպիսով, սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով խորականության դրսնորումները սկսում են ԼԳԲՏ համայնքից դուրս տարածվել, ինչը կարող է ավելի բարդացնել ոչ միայն ԼԳԲՏ անձանց, այլ նաև նրանց աջակիցների համար ապահով միջավայրի ստեղծումը, ինչպես նաև ԼԳԲՏ մարդու իրավունքների պաշտպանությամբ զբաղվող անհատների և կազմակերպությունների գործունեությունը։

Յասարակության մեջ ԼԳԲՏ անձանց դեմ խոսելու պատվաբերությունը Յայաստանում ևս ցույց տվեց, որ կարող է լինել հենց նույնասեռական անձի կողմից։



# Առաջարկություններ

## Պետական մարմիններին՝

- ▼ Դադարեցնել պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց վիրավորող, նրանց նկատմամբ ատելություն և խտրականություն սերմանող հայտարարությունները։ Զեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմինների ներկայացուցիչների կողմից ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքը կանխելու, իսկ տեղի ունեցած դեպքերում՝ այդ անձանց պատասխանատվության ենթարկելու առիթով։
- ▼ Ամբողջական, օբյեկտիվ և բազմակողմանի քննություն իրականացնել ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների առիթով՝ բացառելով քննություն իրականացնող մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական, կանխակալ վերաբերմունքը և դադարեցնելով ԼԳԲՏ անձանց դիմումների դեպքում գործը ի վճաս տուժողի լուծելու արատավոր պրակտիկան։
- ▼ Զեռնարկել համապատասխան միջոցներ փակ հաստատություններում ԼԳԲՏ անձանց անվտանգությունն ապահովելու, դաժան և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի դեպքերը կանխելու, իսկ նման դեպքերում՝ պաշշաճ քննություն իրականացնելու համար։
- ▼ Զեռնարկել համապատասխան միջոցներ պետական մարմիններում ԼԳԲՏ անձանց նկատմամբ խտրական վերաբերմունքը կանխելու համար, այդ թվում՝ ոստիկանության և դատախազության մարմիններում ծառայողների, դատավորների վերապատրաստումների, իրազեկումների և այլ միջոցներով։
- ▼ Ընդունել խտրականությունը կանխարգելող, ինչպես նաև արգելող՝ քաղաքացիական, վարչական և քրեական պատասխանատվություն սահմանող առանձին համապարփակօրենսդրություն, որը կապահովի խտրականությունից պաշտպանված լինելու անձի իրավունքը նաև սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության հիմքով։
- ▼ Վերանայել ատելության խոսքն արգելող ՀՀ օրենսդրությունը, սահմանել «ատելության խոսք» հասկացությունը, պատասխանատվություն սահմանել որոշակի հատկանիշներով օժտված անձանց, ներառյալ ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն, անհանդուրժողականություն սերմանող խոսքի արգելքը։
- ▼ Վերանայել ատելության հիմքով հանցագործություններն արգելող ՀՀ օրենսդրությունը, մասնավորապես նախատեսել անձի նկատմամբ սեռական կողմնորոշման և/կամ գենդերային ինքնության հիմքով կատարված հանցագործությունը՝ որպես քրեական պատիժը և պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք։
- ▼ Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարներ պետական մարմինների համար առաջարկությունների, մասնավորապես ՀՀ Ազգային ժողովի պատգամավորների, ՀՀ Կառավարության ներկայացուցիչների և պաշտոնատար այլ անձանց շրջանում։
- ▼ Խթանել հանդուրժողականության, հավասարության գաղափարները հասարակությունում, մասնավորապես իրավարակայնորեն հանդես գալ հանդուրժողականություն սերմանող հայտարարություններով՝ ճանաչելով ԼԳԲՏ անձանց հասարակության լիիրավ անդամներ և քաղաքացիներ լինելու փաստը։

### **Զանգվածային լրատվության միջոցներին՝**


- ▼ Դադարեցնել ԼԳԲՏ անձանց նկատմամբ ատելություն և անհանդուրժողականություն սերմանող հրատարակումները՝ հասարակությանը մատուցելով գրագետ, էթիկապես ընդունելի և ԼԳԲՏ մարդու իրավունքների նկատմամբ հարգանք սերմանող հրատարակումներ:
- ▼ Չշահարկել ԼԳԲՏ անձանց առնչվող ցանկացած թեմա՝ զերծ մնալով հասարակության մեջ անհարկի անհանդուրժողականություն և ատելություն սերմանելուց:

### **Միջազգային և տարածաշրջանային կազմակերպություններին՝**

- ▼ Պատշաճ կերպով վերահսկել Հայաստանի Հանրապետության կողմից ստանձնած ԼԳԲՏ անձանց իրավունքների վերաբերյալ միջազգային պարտավորությունների կատարման գործընթացը:
- ▼ Հանդես գալ պաշտոնական հայտարարություններով՝ ի աջակցումն ՀՀ-ում ԼԳԲՏ անձանց իրավունքների պաշտպանության կարևորության և առաջնայնության:
- ▼ Մարդու իրավունքներին առնչվող իրենց զեկույցներում անդրադառնալ սույն զեկույցում բարձրացված ԼԳԲՏ անձանց իրավունքների խախտումների ծնավորված պրակտիկային:

### **Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակին՝**

- ▼ Բարձրացնել հասարակության տեղեկացվածության մակարդակը խտրականության, և դրանից բխող բացասական հետևանքների մասին, ժողովրդավարական հասարակությունում խտրականության բացառման կարևորության և հավասարության սկզբունքների մասին:
- ▼ Բարձրացնել հասարակության տեղեկացվածությունը ատելության կոչերի և դրա քարոզության հակաօրինականության մասին:
- ▼ Իրականացնել համապատասխան ջատագովություն Խտրականության դեմ արդյունավետ օրենք մշակելու և ընդունելու, ինչպես նաև այլ իրավական փաստաթղթերում համապատասխան փոփոխություններ կատարելու մասին:





Հանրային տեղեկատվություն և գիտելիքի կարիք ՀԿ

Է-փոստ՝ [info@pinkarmenia.org](mailto:info@pinkarmenia.org)  
հեռախոս՝ +374 60 377277



[pinkarmenia.org](http://pinkarmenia.org)